ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

13.02.2019
344-68

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Մեծարգո պարոն Վարչապետ,

Կառավարությունը գործարկել և ակտիվորեն կիրառում է e-request էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, սակայն գործնականում օգտագործողների համար հարթակը մի շարք խնդիրներ է ստեղծում, որոնք դժվարեցնում է ինչպես քաղաքացիների, այնպես էլ պետական մարմինների աշխատակիցների՝ հարթակի հետ աշխատանքը։

Ուստի, ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ պատճառներով e-request էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում ՀՀ որոշ գերատեսչությունների անվանումները մինչ օրս դեռևս հին տարբերակով են և չեն թարմացվել (օրինակ՝ նշված է Բնապահպանության նախարարություն Շրջակա միջավայրի նախարարության փոխարեն)։
2. Ի՞նչն է խնդիրը, որ որոշ պետական կառավարման մարմիններին ուղղված գրությունների ընթացքը կարելի է հետևել հարթակի միջոցով, մյուսներինը՝ տեխնիկապես հնարավոր չէ։
3. Ի՞նչ է արել «էկենգ» ընկերությունը մինչ օրս e-request էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի տեխնիկական վիճակը բարելավելու ուղղությամբ։
4. Խնդրում ենք տրամադրել e-request էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի պատասխանատու անձի տվյալները՝ հարթակի վրա տարվող աշխատանքի ընթացքի վերաբերյալ ընթացիկ տեղեկություններ ստանալու համար։

Խնդրում ենք Ձեր հանձնարարականը վերոհիշյալ խնդիրները հնարավորինս սեղմ ժամկետներում շտկելու և հարթակը լիարժեք օգտագործման համար կիրառելի դարձնելու ուղղությամբ։

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան